



**ԷՔՍՊՐԵՍ /ԱՐԱԳ/ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԻ(ԱՌԱՆՑ  
ԳՐԱԿԻՆԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ) ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՎՈՂ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ**

<b>Վարկի /վարկային գծի պայմանները</b>	
Նպատակը	Բիզնեսի զարգացում /կրեդիտորական պարտքերի մարում, հիմնական և շրջանառու միջոցների ձեռքբերում, ընթացիկ ծախսերի կատարում/
Արժույթ	ՀՀ դրամ կամ ԱՄՆ դոլար, ԵՎԲ
Տարեկան անվանական տոկոսադրույք	15 տոկոս ՀՀ դրամի դեպքում, 12 տոկոս ԱՄՆ դոլարի դեպքում 8 տոկոս ԵՎԲ-ի դեպքում
Վարկային գծերի դեպքում վերոնշված տոկոսադրույքները կավելանա 0.5տոկոսով Վարկային գծի չօգտագործված մնացորդի նկատմամբ սահմանվում է տարեկան 0.2տոկոս	
Ժամկետ	Առավելագույնը 36 ամիս
Վարկի առավելագույն գումար	4,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար կամ համարժեք ԵՎԲ
Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ, անկանխիկ
Մարման եղանակ	Ամենամսյա հավասարաչափ վճարումներ (անուիտետ), կամ ամսական վարկից հավասարաչափ և հասանելիք տոկոսագումարները (գսպանակաձև )
Վարկի նվազագույն գումար	100,000 ՀՀ դրամ
Վարկի նվազագույն ժամկետ	3 ամիս
<b>Բանկի միջնորդավճարներ</b>	
Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար	Վարկի գումարի 0.5 տոկոսի չափով, նվազագույնը 20,000 ՀՀ դրամ
<b>Ապահովվածություն</b>	
Ապահովվածություն	Նվազագույնը մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից տրամադրվող երաշխավորություն, Երաշխավոր կարող են հանդիսանալ վերջին մեկ տարվա ընթացքում դասակարգված վարկեր չունեցող անձինք /իրավաբանական և ֆիզիկական/ կամ Բանկի վարկառու հանդիսացող իրավաբանական անձի հիմնադիրները, տնօրենը
<b>Տույժեր</b>	
Ժամկետանց վարկ	1. Ժամկետանց վարկի նկատմամբ դադարում է գործել Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը և ժամկետանց վարկի նկատմամբ սկսում է գործել ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսադրույքը 2.Ժամկետանց վարկի նկատմամբ հաշվարկվում է տույժ`



**ԷՔՍՊՐԵՍ /ԱՐԱԳ/ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԻ(ԱՌԱՆՑ  
ԳՐԱԿԻՆԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ) ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՎՈՂ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ**

	յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար տարեկան 12տոկոսի հաշվարկով
Ժամկետանց տոկոս	Ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ հաշվարկվում է տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար տարեկան 12տոկոսի հաշվարկով
Վաղաժամկետ մարման տույժ	Չի հաշվարկվում

**Վարկը տրամադրվում է**

1. Առանց ֆինանսական վիճակի վերլուծության , եթե դիմորդը .
  - բանկի վարկառու է /նվազագույնը մեկ տարվա/ և վերջին մեկ տարվա ընթացքում դասակարգված վարկեր չի ունեցել
  - այլ բանկի վարկառու է և վերջին 2տարվա ընթացքում դասակարգված վարկեր չի ունեցել :

Անհրաժեշտ է ներկայացնել միայն ՀՀ պետական եկամուտների տեսչությունից տեղեկանք հարկային պարտավորությունների բացակայության մասին:

2. Ֆինանսական վիճակի վերլուծությամբ՝ Եթե վարկառուն չունի վարկային պատմություն, վերլուծությունը իրականացվում է համաձայն Վարկավորման Կարգի

**«Մելլաթ բանկե ՓԲԸ-ում հաշիվ բացելը պարտադիր է :**

**Ներկայացվող փաստաթղթերի ցանկ**

**Բանկի վարկառու , այլ բանկի վարկառու հանդիսացող անձանց/իրավաբանական անձ,  
Անհատ ձեռներեց / համար**

1. Դիմում
2. Տնօրենի , բաժնետերերի անձնագրի և սոցիալական քարտի պատճենները
3. Համաձայնություն «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» վարկային բյուրոյից տեղեկություն ստանալու համար
4. Հարցաթերթիկ փոխկապակցված անձանց բացահայտման համար
5. Արտարժույթային վարկ ստանալու դեպքում հաստատում՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով հնարավոր անբարենպաստ հետևանքները կրելու մասին
6. Կազմակերպության կամ անհատ ձեռներեցի Պետական ռեգիստրից ստացված վկայականը



**ԷՔՍՊՐԵՍ /ԱՐԱԳ/ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԻ(ԱՌԱՆՑ  
ԳՐԱՎԻՆԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ) ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՎՈՂ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ**

7. Կազմակերպության կամ անհատ ձեռներեցի հարկային կողը
8. Լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեպքում համապատասխան լիցենզիան
9. Կազմակերպության վերջին հաստատված կանոնադրությունը
10. Արտարժույթային վարկ ստանալու դեպքում հաստատում՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով հնարավոր անբարենպաստ հետևանքները կրելու մասին
11. Տեղեկանք հարկային տեսչությունից բյուջեի հանդեպ ունեցած պարտավորությունների մասին
12. Երաշխավորների անձնագրի և սոց քարտի պատճեն, հիմնադիր փաստաթղթերի պատճենները /եթե երաշխավորը իրավաբանական անձ է/:
13. Անհրաժեշտության դեպքում՝ բանկի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր

**Վարկի տրամադրման դրական կամ բացասական որոշման կայացման վրա ազդող գործոնները՝**

- վարկային պատմությունը
- վարկառուի կողմից տրամադրված տեղեկատվության իսկությունը
- համապատասխանությունը ծրագրի պահանջներին
- հաճախորդի եկամտոնների և ծախսերի կազմն ու կառուցվածքը
- այլ գործոններ

• ***Տոկոսագումարի հաշվարկման կարգ***

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ՝ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՓԱՍՏԱՅԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՎԱՐԿԻ ԱՐԺՈՒՅԹՈՎ: ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ԸՆԴՈՒՆՎՈՒՄ 365 ՕՐ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՏԱՐԻՆ:

Տրամադրված վարկերի համար անվանական տոկոսադրույքի փոփոխություն չի նախատեսվում:

Արտարժույթով վարկերի մարումների չափի փոփոխություններ՝ կապված փոխարժեքի ազդեցության հետ բանկում չեն կատարվում:

**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ԶՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:ՁԵՐ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈԶԸՆԴՈՏԵԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՍ:**